

✓ LCN
2023

1999

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ե՛ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ

Լեզուն ազգ կը նշանակէ
Ա.՝՝՝.

Nous allons renaitre avec elle
Au premier rayon du soleil !
ALFRED DE MUSSET



ԿՈՊՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՅԳԱԳՐՈՒԹԻԻՆ Ա՛ Մ՛ ԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
1879

ՏԳԱԳՐՈՒԹԻԻՆ

Սրամ Մ. Աշխատան էս ընկեր.

Կ. Պոլս Զարմարեղար Զիւմպուլու խան.

207

ԱՐԸՄ ԵՒ ՆՈՐՀԱՏ ՆԵՐՍԻՍԵԱՆ
ԻՄ ՎԱՂԱՄԵՌ ՄՕՐԱՔԵՆՈՐԴԻՆԵՐԻ
ՅԻՇՍՏԱԿԻՆ

Ե. Տ.

Հասցիւղ, 1877.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Nous devons lutter jusqu'à
ce que le siècle ait englouti les
dernières superstitions du passé.

EUGÈNE PELLIETAN

Ա.

Մեծ մասն ուղղուած մի ծերունի գրագէտի
ոյր ճերմակ մազերն աւելի ճերմակ մարմարին տակ
են ծածկուած այսօր, և ամբողջն երկու վաղամեռ
էակների յիշատակին նուիրուած, այսպէս է այն
մատենիկ 'գոր կ'անուանեմք Նոր կեանք: Պէտք է
յաւելել թէ հեղինակն ալ, որպէս նախնի Գաս-
գիյեան մատենագիրներն, ընտելացած մահին հետ
յաճախ ի նմանէ կը ներշնչուի հետագայ էջերին
մէջ:

Եւ սակայն ոչ մի գիրք աւելի քան ներկայն
կ'արդարացունէ գուցէ իւր մակագիր: Պիտի յայտ-
նեմք թէ է՛ր:

Իրր երկուորեակ քոյրեր են 1860 և 1874
տարիներն: Մի սակաւամեայ միջոցով միայն իրա-
րէ գատուած, այս երկու անմահ թուականներ կը
միանան երկու գերագոյն գործերի մէջ, ոյց ծը-
նունդ տուին յաջորդապէս: Չի թէ մին իւր Սահ-
մանադրութիւն բերաւ Հայ ազգին, միւսն իւր
սահմանադրութիւն նուիրեց Հայ լեզուին:

4 2023-60

28 2027

Ը

Արդարեւ, Գրական փորձերի հրատարակումովն սյր Առաջաբանն 1 յանվար 1874 թուականն կը կրէ, մի նոր և փառաւոր չքմանի մէջ կը թեւա- կոխեն ազգային լեզուն և գրականութիւնն:

Շատ կանուխ նախադրացած և բոլոր իղձե- րովս կոչած վնիլով այն արդիւնաւէտ յեղափո- խում, 'զոր նաեւ նախակարգաւ կը հաւատայի բարոյական և քաղաքական վերածնումին, գրիա- բաց ընդունեցայ նոր դրութիւնն, և ծնրողրեցի Հայ լեզուի նորոգ իշին առջև իրրև նաև Հայաս- տանի . . . աւագայ փրկիչին առջև:

Այլ Նոր պատուիրանն, — աւաղ, այս է բո- լոր նորոգումների պատմութիւնն, — նոր պատ- ուիրանն գայթակղեցուց Հրեայներն և յիմարեցուց Հեթանոսներն:

Հայհոյանքներ և կռուիներ Դսի բարձրացան Նորոգիչին դէմ. և աչղի տղէտ մատն, ընդհան- րապէս մոլորումի ենթակայ, ճշմարտութիւնի ուխ- տաղիր թշնամիներին հետ միացաւ ճշմարտութիւնի անձնուրաց ատոյեանին դէմ:

Ընտրողական դպրոցի գեահաստ հիմնող իրն, որ հագիւ հրածեչտ տուած էր ուսանողի խաղաղ կեանքին, մի կատաղողունդ բանակի դէմ գրո- ուեցամ յանկարծ: Արդ գինուեցաւ Գրիջով եւ Սոս- րով, — և «անյողողդ արիութեամբ», վկայեց Օտեան. Գրիչն մուրեակլին համար, և սուրն մու- րրիչին դէմ:

Հազուագիւտ ազատամիտ ազգայիններ որք արտովին կը հեծէին աշխարհաբար լեզուի անկայուն բիրտ բռնողն տակն, անիչխան վիճակին վրայ:

եկան իսկոյն շարուիլ ազանդապետին (1) ետև, որ զօրապետ կը լինէր միանգամայն: Եւ Մկրտիչ Փոր- թուգալեան, յայնժամ Ասիսի խնրագրապետ, բացաւ իւր ժողովրդական թերթ ընտրողական աշխարհաբարին համար որ, ժողովուրդէն ծնած, կոչուած էր վեհապետել ժողովուրդին հետ, 'զայն ամուղջապէս լուսաւորելէ յետոյ:

Թէև ուշ, — զի բնիսն կամ մանաւանդ գծրախուութիւնն հետի վարեց 'զիս յայնժամ հայ- բնիի երկիրէս, — թէև ուշ, այլ գօտէպինդ մը- տայ ես ալ սուրբ լեզէոնին մէջ, և լեզուարանա- կան կուռանին վրայ սկսեցայ շարունակել այն վանձ մարտ, 'զոր ընդհատած էի ակամայ. — ճշմար- տութիւնի մարտն նախապաշարումի դէմ:

Ընթերցողն պիտի դատէ այս տետրակի մէջ թէ ո՞ր փաստերն են պերտղանց, բազդատելով գաղափարներս նոցա խոհերին հետ որք ընտրողա- կան դպրոցի, այսինք առաջիկական օրէնի աւ- սարհաւած ոտխներն են: Պիտի տեսնէ թէ ո՞ր գաւտ է արդար և ո՞ր անիրաւ, թէ ո՞ւր է խո- բարն և ուստի' կը ծագի ճշմարիտ արդարյոյսն . . . :

Եւ ընթերցողն այս գրքոյի արտուած յարմար պիտի գանէ կրկին տեսակետով: Նախ հեղինակին նկատմամբ, որ մի նոր կեանքի մէջ կը թեւակո- խէր զինուոր գրութիւլ ընտրողական բանակին մէջ: Եւ ապա, ո՞չ ազարէն այս երկ ուղղակի ծնունդն

(1) Ձի մի գրական նորագանդութիւն է ընտ- րողական դրութիւնն, և հայ լեզուի Լուտերն է Մինաս Զերագ:

է Գրակաճ փորձերի , այն անմահ՛ն գիրքի որ եկաւ նոր կեանք աւետել Հայ լեզուին և Հայաստան աշխարհին . և ո՛չ ապաքէն Մխիթարի կրնան կոչուիլ բոլոր ճիւղերն այն սկայ գետի , որ կ'ուսոյք նոր աշխարհի լայնածաւալ դաշտերն :

Բ.

Տասիներորդ գործի մջ ոչինչ աւելի խտառ պահանջ է քան մի ուսանող և քան մի բնթերցող :

Որդ կր գուշակեմ թէ ուրիշ երկու առարկաներ ալ պիտի ներկայացունեն ինձ ընթերցողներս : Նոքա գիտնալ պիտի ուզեն թէ որպէ՛ս այնքան երկար ժամանակ անտիոյ մնային այս հատուածներ , անմիջական հրատարակումի սահմանուած . և թէ է՛ր կը հրատարակուին այսօր :

Կր պատասխանեմ առաջին հարցին : Կրտտանս որ ընտրուիսի բոլոր հայ թերթերէն միայն գունգ (1) իւր էջեր կը բանար իմ յոյուածների համար , որք

(1) ԱՌ. Պ. Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Հասցիւղ , 10 յանվար 1877 .

Մեծարող խմբագիր և բարէկամ .

Հետագայ հակիրճ յօդուածն չ'էի կարող ուղղել Մասիսի . Պ. Ի թիւճեան ընդ միշտ փակեց իմ առջեւ իւր պահպանողական թերթի էջերն : Փունցի տուրի՛ զայն ուրեմն , որ միայն անտրտունջ կը հը-

կ'երեւէին Պարո եւ Մարտ վերնագիրի տակ , որպէս Գրիչ եւ Սուր վերնագիրի տակ իմ անմահ անաշնորդի յօդուածներն :

Այլ փունցի մեծապատիւ խմբագրապետն , որ մի գրական շէջք կուռն էր հրատարակած իւր թերթի , հագիւ արժան դատեց ընդունիլ առաջին լեզու արանական յօդուածս . և երկրորդն ինձ վերայ արձուց անտիոյ այն սր ուր , սրտատրոփ որպէս ամեն գրապէտ որ մի սրտագին էջ կը յանձնէ մաս մուտի , ներկայացուցի նմա պատասխանս առ Սր-

բատարակէ իմ դուն տողեր , և 'զոր առժամեաց դադարումի դատապարտեց նորա ազնիւ խնրագորակութի աննական տհարութիւնն : Մսնգունէ խնդրեցի իմ երկտող գիրի հրատարակումն . խոստում առի այս նկատմամբ , այլ չը տեսայ նամակս այդ թերթի մջ : Պ. Փանոսեան , ում համար մի անդ խմայրելի համակրանք ունիմ անտիական հասակն ի վեր , է՛ր չը գիտեմ , խոժոռ կը նայի ինձե Նոր դարն չ'էի կարող ձանձրացունել նորէն . Ղազար իւր տասերկու սիւներէ երկուն իմ դամբանական յօդուածի ողբացեալ Ղազար Յովակիմեանի վոոյ , այն տաղանդաւոր և հայրենասէր երիտասարդ որ ձրի գրեց , ձրի ուսցուց և ձրի ծառայեց ազգին : Զ. գիւնցի Լրագիրի , որ խնրագորակեան կը ձանաչեմ թէ և . Փորձառութիւնն , աւա՛ղ , թերեհաւատ արու 'զիս :

Ուստի կը դիմեմ Ձեր Թատրոնի , որ բոլոր ազգային օրագիրների մէջ կը փայլի իւն անկողմակալ ոգիով , և որ արդէն ասպնջական եղաւ ինձ :

Հայոյս Արարատեան , երրորդ լեղուարամական յօդուածս : « Այն օր , » որպէս ասեցի մի գրական ահուճի մէջ , « այն օր է որ անիճեցի՝ կիւղղկն-պլրկ որ մամուլով օժտած էր մարդկային ազգն . անիճեցի՝ Քրիստոս որ երանի կարգացած էր աղ-քասններին : »

Իսկ թէ , երկու ամերէ յետոյ , է՞ր ի լոյս կ'ըն-ծայեմ այս յօդուածներ : Այդ հարց ալ անպա-տասխան չը պիտի մնայ :

Կան գրուածներ որք անձեր են յաւիտենա-

Յօդուածս , որպէս պիտի տեսնէք 'գայն , մի ծա-նուցում կը պարունակէ , այն թէ կրթական գոր-ծին պիտի նուիրեմ 'գիտ . և մի ազերս աս մի ե-րեսպիտան , այն թէ Երեսպիտանական ժողովի ուն չհրաւիրէ դատաւարակութիւնի և դատաւա-րակների անկեալ վիճակին վրայ :

Թէ փակուի Թատրոնն ալ մի հալածական գրագէտի դէմ , պիտի հրաժարիմ յայնժամ գրա-կան ատպարկէն , բողոքելով լսին ներկայ ընդ-հանուր խորագրութիւնին դէմ :

Եւ պիտի մտխարուիմ մտածելով թէ , մար-դի սրդին չ'ունէր մի անշ ուր դնէր իւր գլուխ . . . :

Ե՛Տ :

Այս գիրի մէջ , որպէս յայտնուած է , ներ-փակուած էր մի նախկ աս Մեծապատիւ Տիգրան Լիւնտի Եւուսուֆեան , որ ապա Փարսի մէջ հրա-տարակուեցաւ , և ոյր պարունակն արդէն ծանօթ է ընթերցողին :

Կանին նման , և ոյց մեծահրաշ էջերն նորանօր սրանշելիքներ ի յայտ կ'ածեն ամեն օր : Կան գոր-ծեր ալ որք , ինչ ալ լինի իւրեանց թուական , նոր են այնքան ժամանակ ուրբան հանրային դա-ւանանքի մաս չ'են կազմեր այն ճշմարտութիւններ 'գորս կը պարունակեն նորս : Հրաշակերտներ ար-տադրել , այդ ասանձնաշնորհն է այն գերբնոյիք Հակոբէրի որք կարող են « վեր նայիլ » . guardo in alto 'կը գրէ Տանդէ : Իսկ ամեն մարդ որ ի՞նչ ու-նի կամ գրիչ , պարտաւոր է քարոզել այն ճշմար-տութիւններ 'գորս կը գտն հոշակել բարձրագոյն հանձարներ , աւելի սրտտես և աւելի հեռատես քան հասարակ մահկանայուններն :

Անա ինչ որ կ'անէ Նոր կեանքի հեղինակն ալ : Այս էջեր որք կոչուած էին լոյս աեանել երկու ամերէ յառաջ , նա չ'է վարանիր , այո՛ , մամուլի յանձնել 'գայնս այսօր . զի դեռ ընդ հանրացած չ'են ազգիս մէջ այն փրկաւէտ սկիզբներ ոյց ա-խոյեան կը կանգնիմ այս գործի մէջ : Չ'եմ վարանիր հրատարակել պատասխանս ալ աս Պ. Պալթազար-եան . զի թէ և Արշարլոյս Արարատեանի խմբագրա-պետն ալ կենդանի չ'է , այլ դեռ կանգուն են այն նախակապներ 'գորս ընդունած էր այն բաղ-մերախտ հրատարակիչ այնքան օգտաւէտ սկիզբ-ների հետ :

— Մի օր , հազիւ տասնինգ ամեայ պատանի էի յայնժամ , մի լուսամիտ և ազնուատիրտ անձ , սիր-տիս այնքան պաշտելի որքան իմ ողբացեալ հայր : այո՛ , գուցէ աւելի պաշտելի : զի իմ մտաւոր հայր է դա , Գրիգոր Կիւմիւշեան , ազնիւ մօրաքեռայրս :

մի գիրք տուաւ ինձ ընթեռնուել, որ իմ աղօթագիրք
եղաւ այնուհետեւ : Այդ ազատաշունչ մասեանի
առաջին էջին մէջ կարդացի . « Հարուածեցէք նա-
խակապներն , ազրիւր մեր բոլոր թշուառութիւն-
ները(1) : »

Դա եղաւ և զա պիտի լինի յաւէտ իմ ալ նշա-
նարան , զա է իմ կոչում . Հարուածել նախապա-
շարունմն և պանծացունել ճշմարտութիւնն :
« Վայ է ինձ եթէ ոչ քարոզիցեմ : »

Գ.

Եւ այժմ, ո՞ ընթերցող , և այժմ . . . կը գամ
ներում հայցել իքէն . — և ի՞նչ յանցանքի հա-
մար . — յանցանքն իմ շ'է , այլ յանցաւորն ես եմ ,
աւա՛ղ

Կ'ասեն Միքէլ — Սնճեկտի համար թէ չորս հո-
գիններով էր օժտած երկին այն սուտուածային ար-
ուեստապէտ : Իմ ալ , — ներուէ ինձ այն մեծա-
փառ անուէէ յետոյ յիշել ապիկար անձն . — իմ
ալ կուրծքի ետեւ երկու սիրտեր կը բարախեն կամ
մանաւանդ իրար կը բախեն յարածամ : Մի սիրտ
սիրալիր և յուսալիր . մի սիրտ , որ ուժգին կը ար-
քովէ դժբախտ ազգիս և ընդ հանուր մարդ կային
ազգի սէրովն . որ 'զիս կը հրաւիրէ ուր կ'ենայ
կեանքն և ի յայտ կը գայ իւր ամեն երեւոյթներե-
րով : Եւ մի սիրտ հիւանդ և յուսահատ , այլ մի՛

(1) ԼՄԷ ՄԱՌԴԷՆ , Մայրենի դաստիարակութե-
քիւն :

ասէք վատ . մի սիրտ վարակուած այն բարոյական
ժանտ ախտով . — Այդուտ տը Միւսէլ(1) բառերն
են . — ում այրան ազնիւ ծնունդներ ողջակէզ նուի-
րեց մեր սեծայաղթ այլ տարտարախտ տասիներորդ
դար . այն ախտ որ , արարած և արարչութիւն
եռանդագին ուսումնասիրելէ յետոյ , « ունայնու-
թիւն » գոչել կը տար արտագին ֆառուցի , և
Մանֆրէտի մտացումն հայցել կը տար երկնային
հրեշտակէն . որ, ցնորահար , անդուճի բերանն կը
մղկը անխնայ լեւիան , և մանուկ Գուլաի ափին մէջ
կը դնէր մահատու բաժակն
.

Կարդացած ես Աւետարանն , ո՞ ընթերցող ,
և կը յիշես Ահառակ որսիի տուակն : Կը յիշես թէ
սա , հայրական ինչքէն իւր բաժին խնդրելով ,
զնաց անստակօրէն վասնել 'գայն հեռաւոր աշ-
խարհի մէջ : Այլ երբ հայրն տեսաւ հեռուստ կոր-
սուած որդին որ « մեզայ » գեշելով կը վերադառ-
նար հայրենի տունն , 'գայն դիմաւոյել փութաց ,
առաջին պատմուճան սպուց նմա , մատանի դրաւ
մատին և , զենուրով պարարակ եզն , ուրախու-
թիւն կատարեց երգերով և պարերով . — մինչ-
դեռ ոչ իսկ մի ուլ էր զոհած իւր երկց որդիի
համար . որ շ'էր թողած երբէք հայրենի տունն և
անթերի կատարած էր միշտ հայրական պատուէր-
ներն :

Ա՛հ , իմ ալ համակրանք , իմ ալ խանդազա-
տանք . . . իմ հիւանդ , իմ անառակ (ի՞նչ անա-

(1) Խոստովանանք :

ապիւթիւն) սիրտի համար է մանաւանդ . թէ և,
աւելց, նա կր թւնաւորէ կեանքս և գրուածներս,
և նա անշուշտ սիրտի փութացունէ վախճանս աւելի
քան այն մաշտցու չիւանդութիւն, որով կը աւա-
ռաստի մարմինս աշա ճիշդ մի ամ է այսօր :

20 Դեկտեմբեր 1878 .

Պ. Վիլիսազ .

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԻ

Ա.

ՌԻՍՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵԶՈՒԻ ԱԶԳԱՅԻՆ.
ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐԻ ՄԷՋ .

ԱՌ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ

1 Յանւար 1877 .

Պարոններ .

Մի ամիսի մէջ մաշն երկիցս անցաւ երեսփո-
խանական ժողովի մէջէ, և անգութն, հնձեց եր-
կու գլուխներ, ամենէն նշանաւորներէն :

Չէր մէջէ ալ անցաւ նա, երկու շաբաթներէ
յառաջ, և տակաւին կ'ողորաք Ղազար Յովակի-
մեան, ձեր եռանդուն գործակիցն կրթական խըն-
դիրին մէջ :

Կը գամ արդ ցաւակցիլ ձեզ սիրտիս խորէն .
մի մեծ կորուստ արաւ կրթական խորհուրդն,
պիտի ասէի մի անդարմանելի կորուստ, թէ չը վա-
խէի վիրաւորել այն համեստ հոգի, որ չը գիտեմ
ուր է այժմ, այլ գիտեմ քաջ թէ կը տեսնէ և կը
լսէ ըզ մեզ

Կատարելէ յետոյ այս տխուր պարս, կ'ու-

զեմ այսօր զբաղեցունել ըզ ձեզ մի խնդիրով 'զոր արժան է անուանել խնդիր մահի կամ կեանքի :
Եւ ահա խնդիրն .

Մի զէպք , ում նկատմամբ , Փռւջէ զատ(1) մեր բոլոր օրագիրներ մի երկիւղած լուսթիւն պահեցին , մի նշանաւոր զէպք , մի ամիսէ յառաջ , կատարուեցաւ Զմիւռնիաի մէջ : Այս քաղաքի Ուսումնական խորհուրդն որոշեց , ոչ արտաքսել Մեսրոպեան վարժարանէն զբարարն , որպէս տարածայնեցին զբարարեաններն , այլ Ուսումնարանի բարձրագոյն դասին վերադահել այն մեռեալ լեզու 'զոր սովոր եմք ուսցունել Ծագկոցէն սիսի լով Ես եռանդագին ծախահարեցի այդ խաղաղական և արգասաւոր յեղափոխումի . զի մի յեղափոխում է սա , և ամենէն կարէւորն և ալքօքուան 1860ի վեհ յեղափոխումէն յետոյ :

Ինչ որ արաւ Զմիւռնիաի կրթական խորհուրդըն Մեսրոպեան վարժարանի համար , կ'առաջարկեմ ձեզ , Պարոններ , կատարել 'գայն կոտանդընուսովիսի վարժարաններին մէջ :

Կ'առաջարկեմ ո՛չ զբարարի բարձումն , այլ նորա բարձրացում իւր արժանաւոր կարգի . բառնալ 'գայն , այո՛ , Նախակրթարանէ և բարձրացունել 'գայն Ուսումնարանի մէջ :

Եւ այս առաջարկ , կ'անեմ 'գայն .

Նախ , յանուն աշխարհարարի 'զոր դեռ բազմաթիւ զրագէտներ , — անհասանելի՛ իր , — իբր

(1) Թէև այս թերթի կարծիքն բարենպաստ չ'էր խնդիրին :

մի Բաախ , կը վանեն լեզուների հանդէսէն , և ում սակայն մի կենդանի լեզուի բոլոր յատուութիւններն կը ճանաչեն Էփեսեան , Պատկանեան , Նազարեան , Նարանդեան , Այտրնեան , Ռսկանեան , Զօրայեան , Աղարէկեան , Մամուրեան , Օտեան , աշխարհարարի առաքեալն , և Ռուսինեան , երիցս սղբացեալ Ռուսինեան , «այն նահապետ ընտրողական դարոցի» , որ հաւանութիւնի նշմար կ'անէ ինձ իւր կիսարաց գերեզմանէ . . . : Այն զրագէտներ , որք կ'ուրանան աշխարհարարի էութիւնն իսկ , կրնան միթէ համարժէք նկատուիլ նոցա , որք կը հօշակեն 'գայն իբր մի զբաղեան լեզու որ կոչուած է վեհապետել :

Երկրորդ , յանուն բանավարութիւնի . զի բառաւոր չ'է , կը կարծեմ , նոյն ուսումն աւանդել աշակերտների , որք սահմանուած են տարրեր ասպարէզներ ընդ զրկել . բանաւոր է թէ մի ուսանող որ , զսր օրինակ , վաճառական պիտի լինի , զբարար չարագրութիւնի , 'գոր չ'է պահանջեր առեւտրական ասպարէզն , վատնէ այն ժամեր , 'զորս պարտաւոր էր նուիրել այնպիսի ծանօթութիւնների որք անհրաժեշտ են այդ ասպարէզի համար : Սա ոչ միայն մի մանկավարժական սխալ , այլ և մի ամենասոսկալի ոճիր է , որպէս կը զրէ Պ . Իփէքճեան(1) :

(1) Կրթութիւն 'ի Լօզան և մանկավարժական հրահանգք .

ՄԱՄՈՒԼ ԱՐԵԻԵԼԵԱՆ , ամսաթիւ Յուլիսի

Երրորդ և վերջապէս յանուն գիտութիւնների, որք պարտաւոր էին առաջին տեղն գրաւել մեր կրթական յայտագիրի մէջ, և 'զորս ընդհանրապէս կը զոհենք անխիղճ գրաբարի խոժոռ և անյազ դիրքին :

Կը կանխեմ պատասխանել մի օրինաւոր առարկի 'զոր պիտի ներկայացունէք ինձ. « Այն բազմազան աշխարհաբարներէ, պիտի հարցնէք ինձ, որք կը խօսուին և կը գրուին նոյն իսկ կոստանդընուպօլիսի մէջ, որն պէտք է ընդունիլ իրր արպար »:

—Այն, պիտի պատասխանեմ ձեզ, որ տրամաբանական կանոնների վրայ կիմուած է, և որ ամենէն աւելի դիւրուսոյց լինիլ անհամեմատ առաւելութիւնն ունի :

Եւ այդ աշխարհաբար այն է, 'զոր ընտրողապէս ստեղծեց, հզօրապէս պաշտպանեց և հրաշապէս գրեց և կը գրէ դեռ ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ: Նա իւր կողմ ունի տրամաբանութիւն, իւր կողմ ունի գիտութիւն(1), իւր կողմ ունի տաղանդ(2):

Ահա առաջարկս, « պարզ և մեկին »:

Կը սիրեմ հաւատալ, Պարոններ, թէ յառա-

(1) « Պ. Մ. Զերազ գիտապէս կը քննէ և կը լուծէ աշխարհաբարի խնդիրն »:

ՄԱՄՈՒԼ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ամսաթիւ Հոկտեմբերի:

(2) « Իրողութիւնը քու կողմդ էր, քու կողմդ ձգեցիր նաև տաղանդն »:

Գ. Ս. ՕՏԵԱՆ, Նամակ առ հեղինակն Ազգային դաստիարակութիւնի:

Ջիկայ նիտին մէջ, ձեր խորհրդակցութիւնի առարկայ պիտի լինի այն: Կը սիրեմ հաւատալ թէ երկար չը պիտի ստասեմ պատասխանի, հաւանութիւն կամ առարկութիւն:

Եւ զի անկ է ինձ հրատարակել ինչ որ կը դաւանի 'լիտս'. զի անկ է ինձ խոստովանիլ երկբայանքս և հոշակել հաւատս, կը հաւատամ թէ այն տարի որ կը սկսի այսօր, չը պիտի վախճանի մինչև որ չը տեսնեմք այն երկու կենսական խճուղիների լուծումն, ոյց վրայ պատիւ ունեցայ ձեզ ուը հրաւիրել այսօր:

Փռւլ

Ե. ՏԵՄԻՃԻՊԱՇԵԱՆ



Բ.

ԱՐԴԻ ԱՇԻՍՐՀՕՒՐՆ.

ԱՌ

Պ. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԻԱՆ

50 Մարտ 1877.

Les langues en général commencent par être une musique et finissent par être une algèbre.

J.—J. Ampère.

Պարոն .

Ժողովուրդի մի մասն , և սէտք է խոստովանել թէ ոչ անուս մասն , մեծ համարում ունի ձեր թերթի վրայ : Թէ ո՞ր աստիճան կ'արդարացունէք ընդ հանրագլխո այդ համարում , չը պիտի քննեմ 'գայն : — Եւ արդէն յայտնած եմ այս նկատմամբ իմ կարծ , որ բոլորովն աննպաստ չ'է Մասիսի :

Կը գամ այսօր ցրել միայն մի նախապաշարում որ կը տիրէ ձեր ընթերցողներին մէջ , և 'գոր կը նախագործէ ձեր խրոխտ գիրք աստատարակ այն գրիչներին նկատմամբ , գեոսալա թէ շափահաս գրիչներ , որք չ'են գործածեր ձեր լեզու : Կը կարծեն ձեր ընթերցողներ թէ Մասիսի լեզուն աշխարհարարի տիպարն է . և , թէ երբէք կրթական խորհուրդն աշխարհարարն սզգային վարժա-

րանների յայտագիրին մէջ դնելի ամպարչուութիւնն գործէ , պէտք է գէթ որ Մասիսեան աշխարհաբարն աւանդուի Հոյ ուսանողներին :

Ասեցի թէ կը գամ փարատել այդ նախապաշարում . « Հարուածեցէք , կը գրէր Էմ — Մառդէն նախահաղներն և վրէպներն , ազրիւր մեր ամեն թշուառութիւնների : »

Այս գործի համար կ'առնում Մասիսի մի թերթն , 'գայն խի ուր արհամարանքով կը խօսիք նոցա վրայ , որք կ'աշխատին բարեկորոգել կամ մանաւանդ աւելի ևս աղաւաղել հայ լեզուն : Տեսնեմք թէ ուզիլք , բերականական է՞ այն լեզու 'գորքսան վեց ամերէ ի վեր իրր տիպար կը ներկայացունէք Հոյ ազգին : Տեսնեմք :

Կը սկսիմ ընթեռնուլ առաջին էջի առաջին սիւնէն .

Յօդ . — Յօդէն կը սկսիմ , զի ձեր առաջին տողեր նորա յոսի գործածումի օրինակն կ'ընծայեն : Դուք անտարբեր կերպով կը գործածէք Ք և Ա . կ'ասէք « Հեռագրական լուրերը » և զարաթ օրնս :

Եւ քմահաճ կը գործածէք յօդն . աւելի իրր զարդ քան իրր մի որոյիչ տառ : Կը հատտատեն 'գայն հետագայ օրինակներն , — և բազմաթիւ օրինակներ 'գորս զանց կ'անեմ . « Եւրօպական լուրագրաց խօսքին նայելով . Անգլիոյ նախարարաց խորհրդոյ ներկայացած էր : »

Այն անունների մէջ որք բիւն կը վերջաւորին , սեռականի և վերջատառն յօդի հետ կը շփոթէք , որպէս յայտնի կը ցցունեն սա տողեր . « Չ'ը Օգոստախառ նախնեաց պաշտպանութեան(ն) շնոր-

հիւ իրենց փառաւոր գաւազանին հնազանդող ազօ
գերը » : Ուրիշ օրինակ , « իւր երախտագիտու-
թիւնք յայտնել այս աշխատութեան(ն) համար » :

Յատուկ անունների վրայ մերթ յօր կը յա-
ւելիք մերթ ոչ . « Շքուղէն մինչև Նիքոսիջ . Լոնտ-
րայէն և Լոնտրայի » :

Գոյական անուն . Հոյով . — Անուններն կը
հոյովիք քմահաճ , մերթ գրարարի և մերթ աշխար-
հարարի հոյովն ընդունիրով , և յաճախ նոյն պար-
բերութիւնին մէջ : « Տուներու և եկեղեցեաց մէջ
եւ » . որպէս թէ ծիծաղելի չը լինէր աջով հին և
ձախով նոր ձեռնոց կրել :

Անուններն կրկին յօրնակի կ'անէք , որպէս բա-
ցայայտ կը ցցունէ հետագայ խօսակցութիւնն .

« Վասիլաքի էֆէնտի . — Անչուչտ կը խնդրեմ
որ իմ խօսքերս արձանագրուին ատենագրութեան
մէջ :

Մարտտեան Սեպուհ էֆ . — Ինչպէս որ կրցի
հասկնալ վասիլաքի էֆէնտի խօսքէն , եւ » :

Անունների հոլովին մէջ մերթ սղում կը գոր-
ծածէք մերթ ոչ . այսպէս , կը գրէք . « Հինգ շաբթի
աւուր նատին մէջ , և « յողովին նիստերուն » :

Նախդիր . — Մերթ կը գործածէք նախդիր
մերթ ոչ , ըստ ձեր քմահաճոյքի . քիմքն է ձեր օ-
րէն . գեղեցիկ օրէն . կ'ասէք « Ի կ . Պօրիս , մայ-
րաքաղաքս մնալ . ծովաժողը պոռոյտ մը ընել , բա-
ցորոշապէս կը հրաւիրէ զթուրքիս եւ » :

Թանական անուն . — Մերթ ածականէն նա-
խադաս կ'անէք մի թուականն մերթ յետագաս .
և մերթ թէ նախագաս թէ յետագաս . օրինակ .

« Գեսպան մը , մեկ ոսկի , մեկ լեղու մը » — մի լե-
ղու , ա՛հ , միութիւն լեղուի , ե՞րբ պիտի ունե-
նա՞ք 'ղայն :

Գոյականներն մերթ կը համաձայնեցունէք թի-
ւով թուականներին հետ մերթ ոչ . կը գրէք , « ե-
րեք պայման » և « երկու կառավարութիւնք » :
կ'երեւի թէ ձեզ համար երեքն երկուէն նուազ
թուական արժէք ունի : Նորհատ , փոքրիկ մօրա-
քեռորդիս , անցած օր ցցունելով ինձ իւր երկու
թոչուններ , կ'ասէր իւր մահկական լեղուով . « Ա-
ռաջ աւելի շատ ունէի , երեք էին , մէկը մեռաւ : »
Այո՛ , երեք էիք երբեմն . . . և դու , նորատի մա-
նուկ , հագիւ կը յիշես 'ղայն որ թուաւ , շատ ան-
ձուկ գտնելով անչուչտ իւր վանդակ . . . :

Թուականների գրարար հոլովն աշխարհարար
հոլովին հետ կ'ընդունիք . այն թերթ 'զոր ունիմ
ափիս մէջ կը պարունակէ « միոյն » , մինչ կ'ասէք
նաեւ « մէկուսն , եւ » :

Դերանուն . — Մերթ գրարարէն մերթ աշխար-
հարարէն փոխ կ'առնուք դերանուններն . « Սեփոք
ժայռոտ դիրքեր են , որք զլսաւորապէս , եւ » :
Լաւագոյն չէ՞ր ասել , քանի որ կը խորշիք դռեհի-
կէն , նորս և որք : Այլ ազքատացունեն՛լ է այդ
հայ լեղուն , որպէս կը փորձեն անել , այնպէս չէ՞ ,
Պ իւթիւձեան , լեղուի նորոգիչներն : Այսպէս ,
դերանունէն օրինակ առնուլով , որ իրազմութիւ
սեռականներէն (ոյր , որոյ , որու , որուն , որի ,
որին , եւ) 'զորս փոփոխակի կը գործածէք դուք ,
— անչուչտ այլափոխումի համար , — նորս միայն ա-
ռաջինն , այսինք ոյրն կը գործածեն : Ոճի՛ր , հը-

րաժարիլ իւր գանձերէ . է՛ր ուրեմն ուսանք տրն-
տեսագիտութիւն :

Բայ.— Բայերին մէջ ուղղութիւն չ'է պահեր
Մասին . հաւասարապէս կը խոնարհէ զ'այնս գրա-
բար թէ աշխարհաբար կանոնով .— թէ կանոն ունի
այն աշխարհաբար որ ընտրողականն չ'է .— Այսպէս
կ'ասէ . « ծանոյց , ներկայացուց , կնքեալ , վարժած
կը լինէին , ըլլալով » :

Կ'ընդունիք կրաւորականի երկու ձեւերն ալ ,
գրաբարի և աշխարհաբարի . « կ'երկարաձգին »
կ'ասէք , և ապա « գուշակուիլ » : Այլ կը մտնամ յի-
շեւ թէ մի ներգործա — կրաւորակերպ ձեւ ալ
ունիք ունի . « Ատեանը բացուելով » :

Անցողական բայերի ցունեյն պարզ էյի կը վե-
րածէք մերթ . նոյն բայն կը գրէք « ներկայել »
և « ներկայացունել կամ ցնել » :

Բաղադրեալ ժամանակների մէջ օժանդակն
մերթ նախադաս կ'անէք անցեալ դերբայէն և
մերթ յետադաս . « չ'էին երեւիր . համաձայնած
են » : Լաւագոյն չ'է՞ նախադասել 'զայն , երբ
ներդաշնակութիւն չ'է գոյանար :

Վերոյիշեալ երկու օրինակներն մի ուրիշ հա-
կասութիւն ալ երեւան կը հանեն . դուք անխտիր
կը գործածէք անցեալ դերբայի երկու ձեւերն եր
և ած : Ինչ կ'ասեմ , գրաբարէն եալ ալ կը մու-
րաք , 'գոր երբեմն էյի վերածեցիք : Գուք ալ բա-
րէփոխում արի՛ք :

Որպէս անունների , նոյնպէս և անորոշ և ան-
ցեալ դերբայների հոլովին մէջ սղում կը ներմու-
ծէք . կ'ասէք « խօսք առնելով և խօսք առնելու » :

կը կարծեմ , անցողակի ասելով , թէ կը սխալիք
առնելն առնույի իմաստով գործածելով , որպէս
վերոգրեալ օրինակներին մէջ :

Նախդիրն , մակբայն և շաղկապն անընտրողա-
պէս կ'առնուք գրաբարէն թէ աշխարհաբարէն .
« անտի , անկէ . բազում , շատ մը . երբ , երբոր .
և , ու , ալ » : Կը յամառիք , հաւատարիմ ձեր
սկիզբի , նոյն բառի գրաբար , աշխարհաբար և
ուսմիօրէն ձեւերն անտարբեր գործածել : Մերթ-
իսկ ամենն միատեղ գործածել հաճոյք կը պատ-
ճառէ ձեզ . « մէկ լեզու մը , հետ 'ի միասին , եւ » :

Մէն—դ'Օմէու կը պնդէր թէ մի մարդի գիրէն
կրնայ գուշակուիլ իւր նկարագիր : Ո՛չ ապաքէն
այնպէս կը վարուիք ազգային լեզուի հետ որպէս
ամեն ազգային խնդրի մէջ . ծառայել ամեն սկիզբի :

Այլ , կ'ասէ Առակախօսն ,

Գոնացունեյ իւր հայր եւ ամեն մարդ ջ'է հը-
նար :

Տեսաք , Պարոն , և ձեզ հետ տեսաւ նաեւ
ձեր դպրոց— զի կան որք կը նկատեն ըզ ձեզ իբր
գլուխ մի դպրոցի— թէ այն լեզու , որով « քաջի
հարուածներ » կը տաք լեզուի ճմարիտ նորոգիչ-
ներին , չ'է զերծ թերութիւնն : Թէ ուզէի յառաջ
վարել գրադաստուան . թէ քննէի ձեր շարագրա-
կան դասակարգութիւն , ուր բայ և բայտէր մի
ծայրէն միւսն կը վազեն խօսին , երբ յստակու-
թիւնն կամ ներդաշնակութիւնն չ'են պահանջեր
'զայն . թէ ուզէի հաշուել այն դերբայաւոր կան-

գունաչափ պարբերութիւններ, գլխովին հակա-
ռակ արդի լուծական լեզուների ոգիին, որք շունչ
կը սպառեն, ուր անվրէպ կը նշմարուի սեռի խըն-
դիրն բայտէրէն յառաջ դրուած լինիլի աններելի
անպատեհութիւնն. թէ ուզէի . . .

Սակայն կը նշմարեմ թէ կը սկսին արդէն ան-
համբերիլ ընթերցողներս, որք չ'են վարժ յօդուած
ընթեանուլ ցանաք նիւթերի վրայ, որպէս կը նկա-
տեն լեզուի խնդիրն :

Կը փափաքէի միայն, կնքելէ յառաջ ներկայս,
յորդորեւ ըզ ձեզ, Պարոն, թէ ապագային մէջ ա-
ւելի յարգանքով խօսիք լեզուի բարէնորոգիչներին
վրայ, ոյց դասին մէջ կը փայլին գրագէտներ ու-
րիչ կերպով անուանի քան դուք :

Սակայն գիտեմ թէ անուղղայ էք դուք : Գի-
տեմ թէ ինչ որ կը բխի նոր սերունդէն, մի ան-
տարբեր լուսթիւնով կամ մի արհամարհական ծի-
ծաղով կ'ընդունիք 'գայն ընդհանրապէս : Կը մոռ-
նա՞ք թէ մի երիտասարդ է, նոյնն ում անչուշտ
կ'ակնարկէք Մասիսի 1956 թիւին մէջ, թէ մի ե-
րիտասարդ է որ այսօր պատգամ կը տայ գրական
աշխարհին մէջ :

Անուղղայ էք դուք : Չ'եմ յիշեր թէ քանի ամե-
րէ յառաջ, հրատարակելով մի նամակ ձոր ուղղած
էի ձեզ, նամակ առանց գրական կամ լեզուական
յուսակնութիւնի, այլ ուր, որպէս միշտ, ջանացած
էի հաշտեցունել լեզուիս շարարդասութիւնն լե-
զուների պայծառագոյնին հետ, հարկ է՞ անուա-
նել Քոանսերէնն . հրատարակելով, կ'ասեմ, իմ
նամակ, դիտողութիւններով պանեմիք նորա գը-

լուս և ոտք . դիտողութիւններ 'զգա կը յիշեցու-
նէ ձեր 1956 թիւի յօդուածիկն :

Դուք անուղղայ էք, Պարոն : Չը գրեցիք դեռ
մի բառ, մի մատնուռ բառ Ազգային դատիա-
րակութիւնին վրայ, այն գիրքի, ոյր վրայ խօսի-
լով անհնար է չը յիշել Տէգաւղի ճառն ոմի վրայ :

Յը նոր տես :

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



Գ.

ԳՐԱԲԱՐ ԵՒ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՂՀԱՐԱՐ.

ԱՌ

Պ. ՂՈՒԿԱՍ Գ. ՊԱԼԴԱԶԱՐԵԱՆ

1 Ապրիլ 1877.

Enfant, je suis Milton ! relève ton courage ;
N'use point ta jeunesse à sécher dans le deuil ;
Il est pour les humains un plus noble partage
Avant de descendre au cercueil !
Sainte—Beuve, JOSEPH DELORME

Ապրիլի առաջին այդն որ ահա կը ծագի, մի անգամ ալ ի յուշ կ'ածէ ինձ այն բառերի խորհրդաւոր զոյգն, 'զոր մի բանաստեղծ վերնագիր ընտրած է իւր երգերի և եղերգներն. Ժպիտք եւ արտասուք :

Կը ժպտի բնութիւնն, որպէս ամեն բան որ առոյգ տիքի մէջ է .

Գարձն, ամի տիքն առոյգ .
Գեղաշուք մայր ծաղիկների,
Նոր բոյսերի եւ նոր սերի :

Կը ժպտի բնութիւնն . . . այլ այն կաթիլներ, որք կը փայլելին անձնիւր նորածին թերթի վրայ, անձնիւր նորաթիթի կոկոնի մէջ, կը մատնեն մի ներքին վիշա . . . :

Չի ո՛վ կը ժտի ասել թէ անգգայ է բնութիւնն . « Արտասուէ՛ , ո՛ր բնութիւն , կը գրէր Վերթեր . որդիդ , բարէկամդ , սիրականդ մօտ է իւր վախճանի » :

Եւ արտասուեց անուշտ նա , որ ահա կ'արտասուէ՛ այսօր ալ իւր այնքան վաղամեռ սիրելիների վրայ . — և դու մին էիր իւր ամենասիրելիներէ , ո՛ր Արամ . . . :

Այլ թէ անուշդ յիշեցի հէգ Ալէմանին հետ , նկարագիրովդ մի հակապատկեր կը կազմէիր սակայն նմա հետ : Նա , վաստակարեկ աշխատիլէ յառաջ , վհատ արդէն այն տիքի մէջ , ուր ոսկեղինիկ երազներ կը պարարեն մեր հոգի , « անողդ դոջ ձեռքով առաւ այն ցուրտ բաժակ , ուր պիտի ճաշակէր մահի արբեցումն » Դու աշխոյժն իսկ էիր . և մահն անհնար կարծեցիր մինչեւ յետին վայրկեանիդ մէջ : « Ապրիլ , Եղիա , պէտք է ապրիլ , կ'ասէիր ինձ երբեմն . պէտք է աշխատիլ ըստ կարի ազգային և մարդկային վերածնումին » :

Քո այդ խօս , ո՛ր Արամ , քո այդ պատուէր 'զոր այժմ իբր կտակդ կը նկատեմ , այն կենդանի շահատակի օրինակի հետ 'զոր յարածամ աջքերիս առջեւ ունիմ , կ'ողէւորեն 'զիս , երբ լքումն , լքումն անողդ կը տիրէ հոգիիս մէջ . երբ կեանքն , իբր մի անհանդուրժելի բեռ , կը ծանրանայ իմ վրայ . երբ կ'երեւի ինձ , որպէս անբախտ Եփեմառ տը Նեոփալի , այն գեղաժմիտ կին , տոգոյն վարդերով պսակուած , որ կ'ասէ . « Մն , երիտասարդ , արիացիր . քո խնդութիւնի բաժին վայելեցիր . եկ այժմ ննջել , եկ հանգ չիլ գիրկիս մէջ : Չ'եմ ես չըք »

նորագուէն , այլ բարի և գթասիրտ . չ'եմ պարզե-
ւեր հեշտանք . այլ անգորրն յաւիտեանական : »

Կը յիշեմ յայնժամ կտակդ , և կ'ասեմ ինք-
նին . « Թէ քեզ համար չը կայ Աստուած . թէ մար-
դըն մի ուղէւոր է աննպատակ որ երբէք չը պիտի
հասնի մինչև նաւահանգիստ . թէ աշխարհ ամեն-
ուրեք նոյնն է . թէ արդէն կ'ենէ սիրտէդ այն
հասաչ , 'զոր մահամերձ Պայրնի սիրտն արձակեց
միայն .

Թե կեանքն ա՛յ ջ'ունի քեզ համար քապոյր ,
կ'երկմտի՞ս լքել դեռ . այդ բեռ տխուր .

սակայն կայ . . . կարճ , աւա՛ղ , մի երիտասարդ ,
քեզ հետ արիւնի և սիրտի կապերով կապուած ,
որ գլուխն կը բանար լսելով Յաւեոտեանականի ա-
նունն . ոյր աչքերն և միտն անքթիթ յառած էին
մի լուսաւոր և անյարիր կետի . որ մի անզուսպ
սէրով կը սիրէր մարդկութիւնն , հայրենիքն և
ընտանիքն . մի երիտասարդ , որ մեռնիլէ յառաջ
պատուիրեց քեզ ապրիլ և աշխատիլ : Պարտաւոր
ես ուրեմն հաւատալ , գործել և մարտնչիլ նմա
համար :

Արդ հրապարակ կ'իջնեմ այսօր նորէն կա-
տարել նախ մի պարտ , և ապա . . . դարձեալ մի
պարտ . — զի մարտն ալ մի պարտ է :

Ա.

Պարոն .

Ձեր 1060 թիւ թերթի մէջ կարդացի մի յօդ-
ուած ուս զարմանալի վերնազիրով , Ձարմանալի

բարձրագոյն բողոք մի : Ուրիշ անունների հետ ,
այդ յօդուած իմ անուն ալ կը պարունակէ , այլ
ոչ իմ գրուած , այսինք իմ դաւանանքի : Պիտի
ընդունիք ձեր պատասխան :

Այլ կը վուժամ նախ ուրախակցիլ ձեզ ջեր-
մագէտ . զի երբ կոստանդնուպոլիսի թերթերն
առ հասարակ մի անտարբեր լուսթիւն կը պահեն
լեզուի խնդիրին նկատմամբ . ի՞նչ կ'ասեմ , երբ մի
քանիներ ի նոցանէ կը յանդգնին իւրեանց գրիչի
անարժան հոչակել այդ կարճւորագոյն նիւթ ,
դուք ձեր թերթի մէջ նախադասութիւն կը տաք
նմա , դուք աւելի խի քան չ'է հարկ : Արշալոյսի
այն թիւ 'զոր յիշեցի , երեք յօդուածներ կը պա-
րունակէ լեզուարանական , ինչ որ կընար սակայն
տեղի տալ ձեր ընթերցողների արդար տրտունջին :

Տա՛նք կեսարի ինչ որ կեսարի է , և Աստուա-
ծի ինչ որ Աստուածի : Այլ գրողատու մի աստ-
ուածն , Պարոն , խստապահանջ է , երբ ձեզ հետ
կը խօսիմ մանաւանդ : Մի քանի բառեր բաւեցին
ձեր գովարանումի , երկա՛ր սողեր հարկ են ձեր
քննադատումի համար :

Այն եռանդ 'զոր կը շապիլք լեզուի խնդիրին
մէջ , կը կորչի անպտուղ . զի մի անիրաւ դատ կը
պաշտպանէք . մի մոլեռանդ գրարարեան էք դուք :

Անհասկանալի չ'է այս ձեզ համար , ոյր ճա-
կատն ձերմակ մաղեր կը կրէ , այլ ցաւալի , յոյժ
ցաւալի :

Ապաքէն կը ցանկայի անսնել ըզ ձեզ , որ Հա-
յաստանի հորիզոնին վրայ արշալոյս պարզեցիք ,
հրատարակելով անդրանիկ հայ թերթն հայ լեզ-

ուով, կը ցանկայի տեսնել ըզ ձեզ առաջդ իմական բանակին մէջ :

Այլ դուք մի ոտխի դիրք ունիք ընդհանրապէս մեզ նկատմամբ . և կրնայ մարդ ասել աջ ի լանջ թէ ոչինչ կայ հասարակ ձեր միտի և ձեր թերթի տիտղոսին մէջ :

Արշալոյսէն յետոյ ի տես եկան ուրիշ թերթեր : Ունեցանք Արեւմուտք, որ իրօք արձագանգ եղաւ նորագարթ Հայ սերունդին մէջ արեւմտեան լուսաւորութիւնի : Ունեցանք Հիւսիսափայլ . ոչինչ աւելի տեւական փայլ ձգած, ոչինչ աւելի լոյս ծաւալած է իւր շուրջ քան այն թերթ, ուր Նալբանդեանց ազատութիւնի առաջին ճիշն արձակեց .

Ազատ Աստուած այն օրից,
Երբ հանեցաւ շունջ փշէյ,
Իմ հողանիւք շինուածքին
Կենդանութիւն պարգեւէյ .
Ես անբարբառ, մի մահուկ
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անգօր բեւերով
Ազատութիւնն գրկեցի :

• • • • •

— Ազատութիւն — գոչեցի, —
Թող որդուայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկար,
Թող դաւ դնէ բշնամին .
Ես մինչ ի մահ, կախադան,
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ
Անդադար ԱԶԱՏՈՒԹԻՒՆ :

Ունեցանք Մասեաց աղաւնի, որ մի քանի ազգիւ Եւրոպացիների համակիր հեռաքրքրութիւնն շարժել տուաւ այն վաղեմի ժողովուրդի վրայ, որ երբեմն ինքնազուխ կը վարէր իւր ճակատագիր Մասիսի շուրջ, ըստ Սուրբ Գիրքի երկիցս օրրան մարդկային ազգի . Եւրոպացիներ, ուր կ'ասէին Նար Պէյի .

Բզ հայրենեացդ ասա մեզ բան, ո՛ր քերթող,
Հայաստանեայց էմք սիրօդ :

Եւ այնքան սրտարուխ և սրտաուռչ հառաչներ կը խլէին քերթօղի սիրտէն : Ունեցանք Մեղու, որ ազգն սահմանադրական կեանքի պատրաստեց և Սահմանադրութիւնն ազգին . Մեղուն, ոյր խմբագրապետի վերջին օրերին, ոյր խմբագրապետի թաղումին վրայ . . . խօսիլ տուէք Պարոնեան, այն արժանաւոր յաջորդ Սըվաճեանի : Ունեցանք Սէր, որ լուրջ ուսումնների սէրն արժարծեց նոր սերունդի սիրտին մէջ : Ունեցանք Ծաղիկ, ոյր անանց րոյրն կը ծաւալի դեռ այսօր ամեն գրական ախումբի մէջ : Ունեցանք Կոռնիկ, որ այնքան շահաւէտ բաներ պատմեց մեզ Հայաստան աշխարհին վրայ, ոյր կարօտն կը մորմաբէ մեր սիրտեր . . . : Ունեցանք Արծուի վասպուրական, ոյր սրբազան հեղինակն իրր արծիւ կը սաւառնի այսօր Հայ հորիզոնին վրայ : Ունեցանք Բանասեր, ոյր շարագիրն արգարե մի համբաւաւոր բանասէր էր : Ունեցանք Սիօն, որ Մուրատեանի աջին տակ մի ճամբիտ գըրական հանդէսի շուրջ ստացաւ : Ունեցանք Երկրագունտ . հի՛նն թէ նո՞րն . հի՛նն ունէր խմբագրապետ Շահնազարեան, նորն Մինաս Ձերազ . հարկ

է՞ յաւելել ուրիշ բան : Ունիմք այսօր Մշակ , Մե-
դու Հայաստանի , Մամուլ Արեւելեան , Փորձ . —
կը տեսնէ՞ք , Պարոն , այս համեռտ օրագրոս : այլ ոչ
մի փորձ աջօրումի աւելի երաշխաւորութիւն ըն-
ծայած է :

Բարձր այս օրագիրներ , ոչց վրայ անհնար էր
ինձ զսպել համակրածքս աւելի երկար , բոլոր այս
օրագիրներ արժանացած են իւրեանց փառքոսի :
Ձեր Քերթի վերնադիրն է միայն որ , որպէս ա-
սեցի , ոչինչ ունի հասարակ իւր պարունակի հետ :

Դուն ուրեք համամտ դուռած լք դուք ազգի
առաջդ իմական մարմն հետ . և չ'եմ մոռնար նորա
առաջապահներէ մի սա բառեր անագ սրոյն կեր-
պով ճշմարտ . « Արշալոյսի վերջադուսական միտն » :

Բ.

Ձեր գիրք Մեքսիկան վարձարանի յայտա-
գիրի բարեփոխումին դէմ մի անդամ ու իրաւունք
տուաւ Ծաղիկի մեծայարդ խորագրապետին :

Դուք , Պարոն , գայթակղութիւն գոչեցիք ,
երբ Զմիւռնի Արթական խորհուրդն , խորհուրդ
արդարեւ զգայուն իւր բարձր պաշտօնի , ճանաչեց
ուր ուրեմն այնորհարար լեզուի իրաւունքներն և
նեքմուծեց 'գայն Մեքսիկան վարձարանին մէջ ,
բարձրագոյն դասին յիշայն վերապահելով , որպէս
բանաւոր է , գրաբար լեզուի ուսումն , այն լեզու
որով դրուած է մեր հին մատենագրութիւն , և
որ , ժողովուրդէն լքուած , գրադէտներէն լքուած ,
այսօր իրեղեցիին մէջ միայն — ուր նաև միշտ չ'է

գործածուիր — դուռ է իւր վերջին ապաստան ,
որպէս ամեն հին լեզուների պատահած է :

Գայթակղութիւն գոչեցիք այս բարեփոխումի
համար , ում , բազմաթիւ ապաստամիտ ազգայիններ-
րի հետ ծափահարեցի ես , անուանելով 'գայն « մի
յեղափոխում , և ամենէն կարևոր և ազդող ուսմն
1860 ի վե՛հ յեղափոխումն յետոյ » : Եւ աւելի
գայթակղեցաք , և մի սուրբ ցասումով բորբոքե-
ցաւ ձեր հոգի , երբ Մամուլ Արեւելեան , հայ Ար-
վիւ տե տեո մօմտն , փութալով իւր ընթերցողների
հաղորդել իմ յարում , յաւելեց , « և դեռ ամառք
մեր մէջ այս անօրէնութեան դէմ կը խօսին » :

Կեդրոնական Արթական խորհուրդն յօգն հա-
սաւ ձեզ : Այդ Արքագրեաց խորհուրդ անշուշտ
առաջինական մրցանակ պիտի շնորհէր ձեզ , թէ
Մօմթիւններ ունեցած լինէինք մեր մէջ , թէ մրցա-
նակներ հաստատուած լինէին խրափուսակի համար
ցիտութիւնն , գրականութիւն և բարեպաշտու-
թիւնն — աշխարհական իմաստով : — Այլ մեր մեծա-
տուններ երգուած են չ'օգնել այս « ապերախա
ազգի » : Ժողովուրդն ալ , որ իւր ազէա վիճակի
հակառակ , տարբեր բնագոյններ և ասարբեր զգա-
ցութեան ունի բարեբախտօրէն , ժողովուրդն ալ ,
աւա՛ղ , տառապէ տառապ երթալով , կարիգակն
Սկիւլտ անկիւրով , ոչ մի խրափուսական հիմար
կու՛մ ունիմք այսօր . ո՛չ մրցանակ գրադէտին հա-
մար , ո՛չ նկանակ նօթէտանջին համար :

Արդ Արթական խորհուրդն արաւ ձեզ համար ,
ջառագով ազգային նուիրական լեզուի , ինչ որ
կարող է անել մի բարոյական մարմին — մի բա-

բոյական վարձատրութիւն , որ այլաբանարարեան
 դասի նախանձն կը շարժէ : Կրթական Խորհուրդն
 « կը փութայ մի մասնաւոր գիրով շնորհակալիք
 յայտնել ձեզ , որ » . . . այլ ամբողջ օրինակեմ
 տոյն նամակի , պիտի ասէի կոնդակի հատուած ,
 'զոր կը յիշատակէք ձեր յօդուածի մեջ , և ում
 անշուշտ ծանօթ չ'են բոլոր ընթերցողներս .

« (Կեդրոնական) Կրթական Խորհուրդը ձեր՝
 Հայկական լեզուին վրայ ունեցած արդար նա-
 խանձայուզութիւնը զօովելով կը փութայ իւր շնոր-
 հակալութիւնը մատուցանել ձեզ , քաջայայտ ըլլա-
 լով որ ձեր կողմէն եւս՝ պիտառակելի նորասի-
 րութեան մը հետեւողներն 'ի յորդոր պիտի կոչէք
 և խորհրդոյս պիտի բարեհաճիք ծանուցանել՝
 Զմիւռնիոյ ազգային երկսեռ վարժարանաց մէջ մեր
 մայրական գրքարաւ լեզուին 'ի նորոյ սկսիլն : »

« Քաղաքիդ Ռստմնական-Խորհրդոյ անդամքն
 ձեր սիրելի որդեակքն չհամեցա'ն յարգել զհայ-
 րական յորդորս ձեր 'ի մասին դասատուութեան
 գրարանին » : Աւա՛ղ , Պարոն . . . :

Սակայն դա չ'է որ այժմ կը գրաւէ իմ ուշ .
 ինչ որ կը գրաւէ իմ ուշ այս վայրկեանի մէջ և պի-
 տի գրաւէ 'զայն յաւէտ , տգիտութիւնն է այն
 Կեդրոնական Կրթական Խորհուրդի , որ պախառա-
 կելի Շորասիրութիւնն կ'անուանէ մի արդէն կազ-
 մուած լեզուի ուսումն :

Եւ մեր Կրթական Խորհուրդ , ոյր անդամներն
 աղէւոր չ'են ամենեւին և որ կրնակ կը դարցունէ
 ներկային . որ չ'է կարօղ հասկանալ և կը դատա-
 սարաւէ իւր մի ստորագաս մարմինի գիտական և

ազգօգուտ զործն , ես ամենախորին ցաւով կը
 պախարակեմ մեր Կրթական Խորհուրդն , որ միւս
 կողմէն կը փայլի մի գործօն անձնաւորութիւնով .—
 Ղարմանալի՝ անձնաւորութիւն , երբ յիշեմք իւր նա-
 խորդների յարարերական անգործութիւնն : Նա
 աջօղեցաւ Երեսփոխանական ժողովի օրակարգին
 մէջ անցունել իւր անդեկագիր . նա կ'ալխատի
 կիրակնօրեայ վարժարաններ բանալ անձնիւր թաղի
 մէջ , հիմնել մի ուսուցչական դպրոց և մի գրա-
 կան կաճառ : Նա կազմեց մի քննիչ յանձնաժողով ,
 մի օժանդակ ընկերութիւն . նա հիմնարկեց Ազ-
 գային մատենադարանն :

Կեդրոնական Կրթական Խորհուրդին հետ ,
 ոյր կրնայ ասուիլ լափիչ գործունէութիւնն կը
 արամադրէ ըզ մեզ ներօղամիտ լինիլ իւր մի սխալ
 քայլի նկատմամբ , կը հաւատա՞ք դուք , Պարոն ,
 թէ հնար է դեռ յարուցանել գրաբարն :

Թէ որքան կը սխալիք , Պարոն , թէ որքան կը
 սխալի Կեդրոնական Կրթական Խորհուրդն , այն
 մարմին որ վերին հսկողութիւնի պաշտօն ունի
 ազգային կրթարանների վրայ , ես չը պիտի քցու-
 նեմ 'զայն : Պիտի ցցունէ 'զայն մի մարդ , որ վե-
 րագոյն է քան Կրթական Խորհուրդն , քան ըզ ձեզ
 և քան 'զիս . մի մարդ , որ , թէ ներելի է սապէս
 ասել , կենակցած է բնութիւնի հետ իւր հիւլէա-
 կան վիճակէ սկսիլով մինչեւ այն հրաշալի վիճակ
 ուր կ'երեւի մեզ այսօր . որ կենակցած է մարդ-
 կային ազգին հետ իւր եղեմական , իւր նախնա-
 կան վիճակէ սկսիլով մինչև այն քաղաքակրթական
 վիճակ ուր բարձրացած է . որ կենակցած է , կ'ա-

սեմ, լեզուների հետ, իւրեանց միավանկական վրեժակէ սկսիրով մինչև այն զարգացուն միճակ ուր հասած են, անընդհատ ձեւափոխումներ կրելով տեղի և ժամանակի ներքործումին տակ. մի մարդ որ ուսումնասիրած է բնական և բարոյական օրէնքներն. և՛ այն օրէններ, որովք կը ծնի, կը զարգանայ և կը մեռնի մարդն, բարձրագոյն արարածն կենդանական աստիճանին վրայ. և՛ այն օրէններ, որովք կը ծլի, կ'աճի և կ'անկնի բոյան. և այն օրէններ, որովք ծնունդ կ'առնուն, կը բարդաւաճին և անցործածելի կը լինին լեզուներն, 'զորս չ'են դադարի լեզուարաններն բաղդատել բոյսերին հետ. մի մարդ, որ միայնդ մտայն ճարտար բժիշկ, բարձր իմաստասէր, աննման Գրագէտ և աշխարհահոյակ լեզուարան է, Պ. Լ. Ղիգուէ իւր Զօւանսական լեզուի պատմութիւնի նախաբանին մէջ մի ընդհանուր ակնարկ ձգելէ յետոյ այն կերպարանափոխումների վրայ 'զորս զանազան ներքործումների տակ կրած է այս լեզու, այն ճգնաժամների վրայ այց պատահած է, իւր ծագումէ մինչև այսօր, սապէս կը խօսի ընդհանուր լեզուների վրայ:

Մտիկ անեմք: Թէև երկար պիտի խօսի Պ. Ղիգուէ, այլ կրթական խորհուրդին պէս չը պիտի խօսի: Հոյ ականջներն ստեպ անիթ չ'ունին լսել այսպիսի հասուածներ, ուր ձեռք ձեռքի կը տան ամենէն դրական գաղափարներն և ամենէն ատարկեան ոճն: Մտիկ անեմք:

« Լեզուներն ալ գործարանաւոր մարմիններ լինելով, ունին մի ներքին սկիզբ որ կը բարկփոխէ

'զայնս արտաքին պարագայներէ անկախ: Այս առիթով ներուի ինձ լրացունել այն սահման 'զոր ի սկզբան օուր լեզուների պատմութիւնին և որոշել նորա իմաստ աւելի ճշգրտապէս քան 'զոր չ'էի կարող անել յայնժամ: Գործածելով մի բառ որ երկար ժամանակէ ի վեր բժշկական լեզուէն հասարակ լեզուին մէջ է մտած, և որ բժշկական իմաստովն իսկ կրնայ գործածուիլ մանաւանդ երբ խնդիրն յոչուածաւոր մարմինների վրայ է, պիտի ասեմ թէ լեզուներն ալ ճգնաժամներ ունին, նախնական կամ երկրորդական, մեծ կամ փոքր: Նախ կը նշանակեմ աստ երկու նախնական կամ մեծ ճգնաժամներ, այն որ լատինէն ումանն յառաջ բերաւ, և այն որ հին ֆռանսերէնէն նորն յառաջ բերաւ: Այս երկու զխաւոր պարագայների մէջ երեւոյթն այնքան ակներեւ է որ նորա լոյս կը ծաւալի լեզուի հետագայ ընթացին վրայ, և կը հաստատէ թէ ինչ որ աստ կը կատարուի ընդհանրապէս, կը կատարուի նաև մասնապէս նուազ խորին այլ ոչինչ ընդհատ իրական և արագիւնաւոր փոփոխումների մէջ: Յայնժամ կը նըըմարուին երկու երկրորդական ճգնաժամներ. այն որ յարմարեցուց տասվեցերորդ դարի լեզուն տասեթերորդի մտածումին և զգացումին, և այն, որ այժմ իսկ, տասիներորդ դարին մէջ, կը կատարէ մեր լեզուի վրայ մի ներգործում ազոու կերպով նորախօսական:

« Այժմ, ի՞նչ է ինքնին մի նմանօրինակ ճգնաժամ. որպէ՞ս պէտք է ըմբռնել 'զայն, որպէ՞ս կրնայ պատահիլ նա, և է՞ր մի լեզու, մի անգամ

հաստատուելի է յետոյ, չ'է յարատեւեր, զոհա-
ցունելով ապագայ սերունդներն որպէս գոհացու-
ցած է անցեալ սերունդներն : Այս հարցով մի-
քայլ առած և արդիւնէն պատճառին հասած կը
լինիք : Ուստի պիտի սահմանեմ լեզուի ձգնաժամն
մի անհամաձայնութիւն 'զոր ժամանակն կը բերէ
երբեմն սովորոյթով և գիրով հաստատուած լեզ-
ուին և այն մարդերի մտաւոր վիճակին մէջ որք
'զայն կը խօսին և ոյց հասկացողական և զգացո-
ղական եղանակներն անդադար կը փոխուին : Այս-
պէս բուսան շրջանի սկիզբն յայտ է թէ Ղատին
լեզուն, այն նուազումէ զատ, ուր անկաւ իւր
դասական շրջանէ յետոյ և 'զոր քրիստոնէական
նորախօսութիւնն ցնցեց մի վայրկեան, գտուեցաւ
այն անհամաձայն վիճակի մէջ, ոյր վրայ կը խօսիմ :
Քրիստոնէական կրօնի հաստատումն, բարբարոս-
ների ձուլումն կամ տիրապետութիւնն և աւատա-
կան եղանակի կազմակերպութիւնն ա' չ'էին նե-
րեր որ այս լեզու ամբողջ պահպանուէր . աշխարհի
ոգին փոխուելով լեզուի ոգին ալ փոխուեցաւ . մի
անհուն նորախօսութիւն տիրապետեց . արդարեւ
ընկերական պարագայների ծանրութիւնն զոհերի
ծանրութիւնն ալ անեցուց . այլ թէ զոհն թէ նո-
րոգումն անխուսելի էին : Ֆրանսերէն լեզուն այս
վիճակ ունեցաւ մասնաւորադէս տասշորսերորդ
դարին մէջ : Յայնժամ նշանաւոր դէպքեր կը կա-
տարուէին . չ'եմ ակնարկեր պատերազմներն կամ
ճակատամարտներն, ոչ ալ քաղաքական հալածանք-
ներն . այլ կ'ակնարկեմ ընկերական դէպքերն,
նորա որք կ'աւետէին աւատական կարգն : Աստ

ալ մի անհամաձայնութիւն կայ տասնեցերորդ-
դարէն հաստատուած լեզուին և մարդկային միտին
մէջ : Մի նոր համաձայնումի պէտքն զգալի կը լինի
և այդ համաձայնում է արդի Ֆրանսերէնն : Նոյն
եղանակով կազմուեցաւ տասեօթերորդ դարի լե-
զուն . երբ կրօնական պատերազմներն վերջացան,
երբ անեցաւ արքունի իշխանութիւնն, երբ հաս-
տատուեցան արքունիքն և դրասիրական ակումբ-
ներն, մտածումի և զգացումի եղանակին յարմա-
րեցաւ խօսիլի եղանակն ալ . անտի այն փոփոխում-
ներ որք հաւասարապէս կը գովուին իրր հարազատ
լեզու, և կը պախարակուին նաև թէ սահմանա-
փակեցին լեզուի այն ազատութիւն, որ ունէր իւր
արժէք : Այլ թէ արդար լինին կամ ոչ այս դրուատ-
ներ և այս տրտունջներ, վայելչութիւնն և կանոնաւո-
րութիւնն գերազանց կը հանդիսանային, կ'իշխե-
ին, և լեզուն ընդունեցաւ նոցա դրօշմ : Այս ալ
մի ձգնաժամ էր, այսինք մի անհամաձայնութիւն
փոփոխական գաղափարին և հաստատ լեզուին մէջ,
որ այժմ զանազան շարժումներ արտադրելով,
վերջապէս փոխեց աւանդութիւնն : Պարսաւ կամ
դրուատ ընդունի, մեր ժամանակի ոճն տարբեր
է դասականների ոճին . շատ տարրեր նորէն ձուլ-
ուած են, բացաարութիւնների և բառերի մի նը-
շանաւոր փոփոխում տեղի ունեցաւ . ինչ որ կ'աս-
ուէր, ա' անգործածելի է կամ քիչ գործածելի .
կ'ասուի նաեւ ինչ որ չ'էր ասուեր երբեմն . այլ
ինչ բաներ անցան լեզուի վրայէ : Յեղափոխում-
ներն, գիտութիւններն, պատմութիւնն, ժողո-
վարդների ձուլումներն, օտար գրականութիւն-

ներն չ'են թողած հանրական մասճումն այն կետի մէջ 'զոր նշանակած էր նմա մի բողոքովին տարբեր ընկերական և մտաւոր վիճակ : Լեզուին մէջ նոյն երեւոյթն է ինչ որ քաղաքական հաստատութիւնների մէջ : Լեզուս ալ կը հաստատուի այն սլայմաններով որովք կը հիմնուի մի ընկերական վիճակ : Այլ հաստատուածն անշարժ է և հաստատօքն շարժուն է : Անտի կը ծագին այն հարկադրիչ պարագայներ որք կը միջամտեն մերթ ընդ մերթ վերահաստատել մի համաձայնութիւն . զի անհամաձայնութիւնն չ'է կաքօղ երկարատեւ լինիլ : Լատին ֆերբոդական արուեստի հեղինակն կ'ասէր թէ անկումի պիտի դիմէր ինչ որ յարգի էր ներկային մէջ , և թէ յարգ պիտի ստանար ինչ որ անկումի մէջ էր : Անալեցաւ նա այս սլարագայի մէջ . զի յայնժամ մարդկային իրերի ընթացն կատարելապէս ծանօթ չ'էր : Դէպ անկում կ'ընթանայ ինչ որ կանգուն է . այլ նորին կարօղ չ'է յարգ ըստանալ ինչ որ անկած է : Սորա բեկորներ կը լըքուին յաւէտ : Սակայն ճշմարիտ է թէ աւանդութիւնն կը մնայ այս ամեն փոփոխումների մէջ և թէ նովաւ լեզուն կը կապուի մարդկային սեռի հնադոյն դարերի հետ ; մինչդեռ նորագուն անդադար կը խլէ պատկառելի կոճղի ոստերն » :

Պիտի խոնարհիք անշուշտ , կրթական խորհուրդն , որպէս ղուք , մի բարձրագոյն հեղինակութիւնի առջեւ որպէս է Պ. Լիդուէ : Կը յուսամ նաեւ որ ա'լ չը պիտի յղէ գաղտագողի թուղթեր պիտի ասէի նախանձայող եկեղեցականների , չը պիտի յղէ խնդակցական նամակներ նախանձայող

գրարարեանների : Կը յուսամ մանաւանդ , Պարոն , որ ալ չը պիտի խօսիք կրթական խորհուրդի և ձեռնհասութիւն » ին վրայ . զի ոչ մի ազգային մարմին ունի այսօր ձեռնհասութիւն լեզուի խնդիրին մէջ :

Պիտի խոնարհիք անշուշտ Պ. Լիդուէի առջև , որ մի ստուար և յաղթական բանակ ունի իւր ետեւ . բանակ որ կը տարածուի Հնդկաստանէ մինչեւ Անկիլիա և Ամերիկա . բանակ , որ զօրավարներն են Լայպնից , Վիլիսնս , Գուռճիուս , Շէկէլ , Շլայխէր , Շէզի , Հոմպոլդ , Կոլմ , Ուիլսըն , Պիւսնուֆ , Պօր , Միւլլէս , Ուիլմնէ , և ուրիշ բազմաթիւ գիտուններ , որք մի անշուր եռանդով կը մշակեն այսօր մի նոր և ընդարձակ գիտութիւն , բաղդատական բանասիրութիւն կամ լեզուաբանութիւն , որ նախատարրներն գուրկ կ'երեւի կրթական խորհուրդն որպէս դուք :



Այժմ , բնորոշ տեսչէք այն բանակ այն ստորաբանակի հետ , որ կանամ կը խաղայ ձեր երկրորդ զօրավարութիւնի և կրթական խորհուրդի գլխաւոր զօրավարութիւնի տակ : Բաղդատեցէք 'զայն նոյն իսկ ընդհանուր գրաբարեան բանակին հետ : Այլ ես գործ չ'ունիմ այսօր դմա հետ . Նա որ ամեն բանի մէջ ներհմտութիւն ունի , սակայն Գօնուառի խոհեմ լուծութիւնն կը պահէ այս պարագայի մէջ . . . :

Դուք միայն կը խիղտիէք , ձեզ աջակից ունե-

Յայով Պ. Նշան Միրզա, Պ. Սաւալանեանց և Պ. Հիւսեան: Արդարեւ իւրեանց զօրավարի արժանեա-
վայել զօրականներ:

Չը պիտի խօսիմ Պ. Նշան Միրզայ վրայ. քնտ-
րողական դպրոցի վեհափառ հիմնադիրն, Մինաս
Զեբազ խոնարհեցաւ արդէն ցրել նորա թիւր գա-
ղափարներ:

Իսկ Պ. Սաւալանեանց, 'զոր այնքան կը պան-
ծացունէք, և որ այնքան կը պանծացունէ 'զինք,
Պ. Սաւալանեան չ'է կարօղ դեռ զանազանել մի
հին լեզու մի նոր լեզուէ, մի մեռած լեզու մի
կենդանի լեզուէ, մի մոմի ա մի մարդէ որ կը շնչէ:
Չ'եմ հնարեր, չ'եմ գրպարտեր. « Բազմահմուտ »
Պ. Տ. Հ. Թ. Սաւալանեանց կը ստորագրէ այն «ա-
մենապատուական և իմաստալից յողուած» յուժ
կը քաշեմ հետագայ խօսերն. « 'ի քննասիրել մեր
զկանոնն քերականութեան մերոյ, գտանեմք 'ի
մասին կազմութեան բանից, ճիշդ համեմատու-
թեան ընդ հին լեզուաց, յունականին ասեմ և
լատինականին, հետեւապէս և միւս լեզուաց Եւ-
րոպիոյ, յորո 'ի շարամասնութեան բանից զմի և
նոյն դասին դասաւորութիւն, թէպէտ և հայե-
րէնն առաւելագոյն ազատութիւն վայելէ բացա-
ռութեամբ իւրովք: Օրինակ առ այս բերցուք
զհետեւեալ հատուած բանից զաղղիերէնին և բաղ-
դատեսցուք 'զայն ընդ Հայ թարգմանութեան: »

Թող ներէ Պ. Սաւալանեանց որ ես ալ բաղ-
դատեմ լատիներէնն, ուժ անձանօթ կ'երեւի,
Ֆրանսերէնին հետ, 'զոր կը թնամանէ դասելով
'զայն, որպէս միւս եւրոպական լեզուներն, մեռած

լեզուների խոսքին մէջ: Սխալեցայ ես ասելով
Պ. Լիդուէ պիտի թուէ այն էական բարեփոխու-
ներ, որք լատինն ուսման լեզուների փոխեցին:

« Լատին հոլովի նուագումն.

Չէզոքի ընդումն.

Յօդի ստեղծումն.

Բայերի խոնարհումին մէջ բաղադրեալ ժամա-
նակների գործածումն անցեալին համար.

Մի նոր եղանակի, Թեականի կազմութիւնն.

Ներգործականն, որ ա'լ ոչ լծորդ տաւերի
յաւելումն, այլ լինիլ բայի օժանդակութիւնով
կը կրաւորականանայ.

Օժանդակների գործածումն ռայերի խոնար-
հումին մէջ.

Մոտ յաւելավանկով մակրայների ստեղծումն.

Վերջապէս լատիներէնէն դուրս լեզուներէ
առուած բառերն որք նոր գաղափարներ կը յայտ-
նեն կամ ալ անգործածելի բառերին տեղ կը
դրուին: »

Ձեր «Եղիպտոսի ճարտար զօրապետ» ի ուշ
կը հրաւիրեմ այս հատուածի վրայ, քաղուած
նախարանէն Պ. Լիդուէի Ֆրանսական բառգիրի,
որ մին է մեր դարի զլրաւոր փառքի տիտղոս-
ներէն:

Պ. Հիւսեան ալ, « յստորոտոյ ճիւնապատ և
արծաթափայլ լերանցն Զուիցերիոյ, 'ի Պագէլ
զեղեցիկ քաղաքէ » ճայն կը բառնայ պաշտպա-
նելով զբարարն: Ապաքէն ըզձալի էր որ այդ ե-
րիտասարդի գիտութիւնն հաւասարէր իւր եռան-
դի: Եզրայրապէս կը յորդորեմ 'զայն որ գէթ

նախնական ծանօթութիւններ ստանայ լեզուագիտական ուսումնների վրայ, որք այնքան էլ ծաղկին մանաւանդ այն նահանգների մէջ, ուր կ'ապրի այդ ուսումնատենչ երիտասարդ: Որպէս Պ. Հիւսեան, կը յորդորեմ, Պարոն, և ըզ ձեզ, կրթական խորհուրդն, Պ. Միրզա և Պ. Սաւալանեան, ուսումնասիրել լեզուների կեանքն. զի, տեսաք 'զայն, լեզուներն ալ գործարանաւոր մարմիններ են. յաւէտ կամ նուազ երկար ապրիլէ յետոյ, կը մեռնին, տեղի սաւառ նոր լեզուների, որք յաւէտ կամ նուազ նոցա դրօշմ կը կրեն: Ուսէք ընկերաբանութիւն, լեզուաբանութիւն և երկրաբանութիւն, և պիտի տեսնէք թէ որպէ՛ս և է՛ր մեռան այն ժողովուրդներ, այն լեզուներ և այն կենդանիներ և տունկեր, որք երբեմն կ'աճէին և կը բարդաւաճէին երկիրի վրայ:

Այլ, աւա՛ղ, դուք, անցնալի մարդեր, ընդհանրապէս մի ախտ ունիք, մի անբուժելի ախտ. դուք ամենագէտ կը կարծէք ըզ ձեզ. դուք կը կարծէք թէ կրնաք ամեն նիւթի վրայ խօսիլ, երբ ոչ մի նիւթ էք իմաստասիրած: Չը պիտի վարանէիք ընդունիլ, թէ առաջարկէին ձեզ առանձին յօրինել մի Հանրագիտարան:

Մի ուղղախոհ և անաչառ գրադատ կը կշտամբէր մի համբաւաւոր վիպասան, անդամ Ֆռանսական կաճառի, Պ. Ալեքսանդր Տիւմա որդին, թէ իւր վէպերի մէջ ամեն ընկերական խնդիրների վրայ կը ճառէ և գուցէ մի անտեսագիտական գործ չ'է կարդացած ամբողջ: Ի՞նչ պիտի ասէր արդեօք Պ. Շառլ Պիկո թէ մեր մէջ դար. ի՞նչ պիտի ասէր

տեսնելով այն գրագէտներ որք կը յանդիւնին գրիչ շարժել լեզուի խնդիրին վրայ, երբ չ'են իսկ կասկածիր թէ մի գիտութիւն կայ որ կը հետազօտէ լեզուների ծագումն, որ կ'ուսումնասիրէ նոցա կապմարտութիւն, կը հաստատէ նոցա ազգակցութիւն և ճիւղաւորութիւն. մի գիտութիւն 'զոր ընդնշմարեց Արիստոտել, 'զոր հիմնեց վերջնապէս Ֆրանսոս Պօր. մի գիտութիւն, որ ունի իւր բեմեր, իւր հանդէսներ, իւր դրատուններ:

Դուք, Պարոն, անգէտ էք այս ամեն բանի: Ասեցի թէ մի ախտ ունիք. ոչ, երկու: Դուք ոչ միայն չ'էք ուզեր ուսնիլ, այլ և չ'էք ուզեր խորհրդածել: Այսպէս, ձեր վերջին կամաւոր գինուորն, որով կը գրադիմ, Պ. Հիւսեան «ուսումնական երիտասարդն» կը գրէ սա խօսեր, 'զորս «իբր պատագամ Տեառն սարժանօք յառաջ կը բերէ» ք:

«Ո՛վ որ մայրենի գրաբար լեզուն սովորած չ'է և ուսանելոյ չը բաղձար, նա իւր ազգին արժանաւոր դուակն ըլլալէ կը զրիէ ինքզինքն, զի իւր ազգասիրական զգացումը շատ թերի է, այո՛, շատ նուազ:»

Խորհեցէք, Պ. Հիւսեան, հին լեզուի ուսումին և հայրենասիրական զգացումին մէջ այնքան անձուկ յարաբերութիւն չը կայ որքան կը կարծէք դուք:

Յիշեցէք, Պ. Հիւսեան. . . յիշեցէք այն Փրոնանսական բանակ ԾՅի, որ դիմադրաւեց ողջոյն Եւրոպայի, դաշնակցած իւր դէմ. լատիներէնի դասն նոր աւարտած չ'էր այն քաջալանջ լեզէոն, և Ղատին լեզուով գրուած չ'էր Մասսեյիգն, այն

վսեմագոյն ճիշ որ երբէք ելնձ է մի հայրենասէր ազատասէր սիրուէ և որ զիւցազնացուց անձնիւր և զինուորն այն հրաշագունդ բանակի: Յիշեցէք Յոյներն, որք կէս դարէ յառաջ, մի գերագոյն արութիւնով մարտնչեցան իլլապի ազատումին համար. նոքա բոլոր գիտելի՞ն մի՞ն է Հռոմբի և Պատոնի լեզուն: Յիշեցէք Չէյթունցիներն. . . այլ բաւ է. բաւականէն աւելի համոզիչ են արդէն այս երկու օրինակներ:

Ահ, առտէն ի վեր 'զիս ծոցիդ մէջ կը հրաւիրես, ո՞րնութիւն, և ես խո՛ւլ կը մնամ ձայնիդ. ես դեռ կ'երկարարանեմ մեր բարբարոս լեզուի վրայ: Մի՞ն է կա՞յ մի լեզու աւելի խորհրդաւոր, աւելի ներդաշնակ, աւելի վեհ քան այն լեզու, որով կը մրմնջես մերթ, և մերթ կ'որոտաս:

Մէք բանաստեղծ կ'անուանեմք 'ղայնս որք միայն կ'ընդ օրինակէն ըզքեզ. Գու չ'ե՛ս միայն ճշմարիտ, գերագոյն բանաստեղծն: Ո՞չ դու որ ներշնչեցիր թիկ Վեստի սրբազան բանաստեղծներն: Ի՞նչ են Հռոմբ և Վիրգիլ, թէ ոչ անհուն սէրիդ արտադրումն: Եւ ո՞վ, տիեզերքի մէջ, մի աւելի մեծ ճշմարտութիւն հռչակեց քան Լորտ Պայրըն, որ աղագակեց:

Ոչ քե սակաւ ինք ըզ մարդ, այլ շատ սիրեմ ըզ բնութիւն:

Ձայն չ'եմ տար քեզ, ո՞ սիրուհիս, որ զարթիւրվ 'զիս կը կոչես. «Ե՛հ, կ'ասես, տեսնել 'զիս իմ վեհագոյն վայրկեանի մէջ . . . »:

Սյւ քո սէր, ո՞րնութիւն, քո համբոյր կրնայ աղիտարեր լինիլ ինձ: Քո սէր, այո՛, մահատուէ, որպէս կի՛նին. Թո՛ղ 'զիս, ո՞րնութիւն. թո՛ղ 'զիս, Մարիամ: . . .

Ե՞ր կեանք ցնցղիկեցին ինձ նոքա, որք 'զիս զիակնացած դտան աւազին վրայ. . . :

Պէտք է որ ապրիմ. պէտք է որ տեսնեմ ազգս առաջադէմ, պէտք է որ տեսնեմ ազգս ազատ: « Լո՛յս, Տէ՛ր, » կ'ազադակեր կէօթէ, « գեռ աւելի՛ Լոյս: » Եւ Նալրանդեանց կը գոչէր անդադար « Ազատութիւն »:

Թողէ՛ք, թողէ՛ք 'զիս. գոնէ մի վերջին բառ սղղեմ առ Արշալոյս Արարատեան, որ մի անդիմադրելի համակրանք կ'աղղէ ինձ, հակառակ իւր անդրջնհեղեղեան գաղափարների:

Դ.

Այո՛, Պարոն, մի թաքուն, մի ներքին, և արդէն մի շատ բնական համակրանք ունիմ Արեւելքի անդրանիկ թերթին վրայ, այր երեւումն իրր մի նշանաւոր դէպք արձանագրուեցաւ ազգային տարեդիրների մէջ: Այլ, աւա՛ղ, ի գերեւ ելան այն թիւր յոյսեր, այց ծնունդ տուաւ ձեր թերթի գեղեցիկ անունն: Արշալոյս արարատեան, ո՞ր սիրտ չ'է թնտար այդ անունի սովեւ, այլ ո՞ր ազատասէր սիրտ չ'է տիրիր նաև մի սկիծարի ձգելով ձեր կջերի վրայ: Ձեր յողուածներ, որպէս ասեցի արդէն, մի տխուր հակապատկեր կը կազմեն ձեր թեկթի տխադրսին հետ:

Ա՛հ, ս'ըբան կը վաճառէ ի, կը կրկնենք, ազատ տեսնել ըզ ձեզ ամեն նախապաշարումէ : Եւ յուսահատ չ'եմ այդ նկատմամբ . տեսնե՛ք Եւրոպայի մէջ մի ծերունի ձեզ նման, մի վաղեմի միտպետան կան, որ ընդունեցաւ հանրապետական գաղափարն և, ինք միայն, աւելի նպաստեց գուցէ նորա ծաւալումի քան բոլոր հանրապետականներն : Հետեւեցէք այն օգոտտախառ ծերունիի, ոյր վրայ հիացած աչքեր կը սեւեռէ համայն քաղաքակիրթ աշխարհն : Որպէս Պ. Թիէս, դուք այլ այրեցեք ինչ որ պաղտեցիր եւ պաղտեցեք ինչ որ այրեցիր : Թուղէք գրաբարն, որ հին Հայի լեզուն է, և ընդունեցէք աշխարհարարն, տասիներորդ դարի Հայի լեզուն . ընդունեցէք աշխարհարարն, որով կը խօսի ժողովուրդն, որով կը քարոզէ վարդապետն, որով կ'ատենաքանէ երեսփոխանն . որով կը գրէ դրագէտն, որով կը շարագրէ խմբագրապետն, որով կը շարագրէք դուք : Ընդունեցէք աշխարհարարն, որով գրուած է մեր անմե՛հ Սահմանադրութիւն :

Կը դուչակեմ, Պարոն, այն առարկ 'զոր, գուարթ և յաղթական, պիտի ներկայացունէք ինձ : Հերքեմ այդ առարկալ, և աւարտեմ յօդուածս, որ արդէն շատ եղաւ երկար :

Պիտի ստէք, « Որբան Հայ, այնքան աշխարհարար . ո՛ւր է ճշմարտութիւնն : Ժողովուրդն իբրաւունք ունի թէ գրագէտն . ուղղախօսականն թէ ծնախօսականն, — զի ծնախօսութիւն է նետի լեզուն :

Ոչ ոք իրաւունք ունէր, ոչ ոք ուղիղ ճանա-

պարհին մէջ Եր մինչեւ այն վայրիեան, ուր մի քսանամեայ երիտասարդ, զօրաւոր ծնած, իւր հզօր՝ և վեհագ ործ աջի մէջ առաւ ժողովրդային լեզուն, և կը վերննայէ 'դայն այսօր Հայ ժողովուրդին, ուղիղ, ներդաշնակ և դիւրօտոյց, որպէս կը տեսնեմք 'դայն Մինաս Չերապի Ազգային դաստարար յուրքիւնին մէջ :

Ընդունեցէք, Պարոն, ընտրօղակոն աշխարհարարն . զի կ'ընդունին 'դայն արամարտութիւնն, ներդաշնակութիւնն և տնտեսութիւնն . զի կ'ընդունին 'դայն առաիններորդ դարն :

Ընդունեցէք ընտրօղակոն աշխարհարարն, որ մի սահմանադրութիւն ունի, և որ միայն արժան, միայն յարմար է մի սահմանադրական ազգի :

Ընդունեցէք ընտրօղակոն աշխարհարարն, 'զոր շատերի հետ ընդունած եմ ես ալ :

Այլ պիտի արհամարհէք իմ հաւանում, որպէս արհամարհեցիք իմ «մասնաւոր կարծ» : Բարկբախտապէս, ձեզ պէս չ'են մտածեր Պ. Լիդուէ, Չերապ և Տէր Սարգսե՛ց :

Նա որ բարձրացուց Զոանտական լեզուն այն սխայ և անմա՛հ յիշատակարան որ «Բառգիր Լիդուէի» կը կոչուի, նա որ կը հրատարակէ այսօր գուցէ Եւրոպայի առաջին իմաստասիրական թերթն դրական իմաստասիրութիւնի հանդեսն, Օղիւսդ Գօնդի փոռաւոր յաջորդն կը գրէ ինձ . « Երջանիկ եմ ապաքէն իմանալով որ մի եղբայրակից էք ինձ դրական իմաստասիրութիւնի մէջ » :

Նա, ոյր յօդուածներն « ոչ միայն պիտի կարգաւ, այլ և պիտի պահեմ դրբատանս մէջ » կը

գրէր Օտեան, երբ դեռ տասեօթամեայ էր նոր
Երկրագունտի խմբագրատեան. նա, որ հանճարն
միաբան կ'ողջունեն Սևիշան, Այտրնեան, Մամու-
րեան, ընտրողական դպրոցի վեհ հիմնադիրն,
Հայ Մալէսպն « հաւանութիւնս փառք կը համա-
րէր անձին: »

Շահեհն ՚ի Սիպիլի հեղինակն, նուիրելով ինձ
իւր երկեր 'գորս կրկին կը կարգամ այսօր, կը
գրէ. « Երբ դուք Շահեհն, և կայծերս կարդալու
արժանի համարիք, ես ալ երկու բիւր մարդ 'զայնս
կարդացած պէտք է համարիմ: »

Թէ սխալիք ալ, « Պարոն, լաւագոյն է ձեզ
արժանաւոր ընկերներով սխալիլ: »

Ե. ՏԵՄԵՐՃԻՊԱՇԵԱՆ

ՑԱՆԿ

ԶՕՆ	Ե
ՆԱԽՄԱՐԱՆ	Է

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԷ

Ա. Ռատան աշխարհաբար լեզուի ազգային վարժարանների մեջ	17
Բ. Սրբի աշխարհաբարն	23
Գ. Գրաբար եւ ընտրողական աշխարհա- բար	30



1870

11
12
13
14

49

«Ազգային գրադարան»



NL0342929

